



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

Կլիմայի փոփոխության Հայաստանի մարտահրավերները քննարկվում են ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ կազմակերպված խորհրդաժողովի շրջանակներում

ԵՐԵՎԱՆ, 15 հոկտեմբերի 2009թ. - Այսօր Երևանում սկսվեց ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ կազմակերպված երկօրյա խորհրդաժողովը, որի առանցքում են շրջակա միջավայրի պահպանության մարտահրավերները՝ ներառյալ կլիմայի փոփոխությունը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի և Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի աջակցությամբ՝ «Խազեր» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառմանը մասնակցում են պետական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության՝ այդ թվում նաև Օրիուս կենտրոնների՝ ներառյալ մարզային ներկայացուցիչներ, գործարար համայնքի ներկայացուցիչներ, տեղի և միջազգային փորձագետներ:

«Գլոբալ կլիմայական խնդիրներին դիմագրավելու անհրաժեշտությունը դառնում է ավելի ու ավելի հրատապ, և կարևոր է միավորել ուժերը՝ իրագործելու համապարփակ քաղաքականություն՝ հետամուտ կայուն զարգացման», - ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինսուր:

Խորհրդաժողովի մասնակիցները կքննարկեն Հայաստանի շրջակա միջավայրի պահպանության մարտահրավերները, գլոբալ ջերմացումը, ջերմոցային գազերի արտանետումը Կլիմայի փոփոխության վերաբերյալ ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի և Կիոտոյի արձանագրության համատեքստում, զարգացող և զարգացած պետությունների մարտահրավերները:

«Սա բարդ գործընթաց է, և զարգացող ու զարգացած պետությունները պետք է հանձն առնեն գտնել ընդհանուր լուծումներ՝ մասնավորապես խթանելով նորարար տեխնոլոգիաները: Հայաստանը պատրաստ է կիրառել մաքուր զարգացման մեխանիզմները, և աջակցությունն այս ոլորտում անփոխարինելի կլինի», - ասաց Հայաստանի բնապահպանության փոխնախարար Սիմոն Պապյանը:

«Խազեր» հասարակական կազմակերպության նախագահ Ամայա Համբարձումյանը հավելեց. «Միջոցառման նպատակն է խթանել քննարկում ոլորտում և շարունակական գործունեություն գլոբալ ջերմացման հաղթահարման ուղղությամբ»:

Խորհրդաժողովը կազմակերպվել է դեկտեմբերի 7-18-ը Կոպենհագենում կայանալիք ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության վերաբերյալ շրջանակային կոնվենցիայի 15-րդ նստաշրջանին ընդառաջ, որին կմասնակցի նաև Հայաստանը:

Լրացուցիչ տեղեկության համար խնդրում ենք դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի մամուլի և հանրային տեղեկատվության հարցերով ավագ օգնական Գայանե Տեր-Ստեփանյանին հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10) 22 96 10/ 11/12/13/145407, քջջ. (091) 012603.